

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Սեբէոս Պատմիչ

Եօթներորդ դարու միակ պատմագիրն է Սեբէոս: Ոչինչ գիտենք անոր մասին, բացի այն կէտէն՝ որ ինքզինք ականջալուր կը ներկայացնէ 640-41ին տեղի ունեցած դէպքերուն. ուստի կրնանք ենթադրել որ ապրած ըլլայ առ առաւելն Վեցերորդ դարուն վերջերէն մինչեւ Եօթներորդ դարուն երկրորդ կէտերը: Ներսէս Շինող Կաթողիկոսին ժամանակ Դուինի մէջ 645ին գումարուած ժողովին մասնակցող եպիսկոպոսներուն մէջ կը յիշուի Սեբէոս անուն Բագրատունիներու եպիսկոպոս մը. շատեր կը նոյնացնեն այս եպիսկոպոսը պատմագիրին հետ, թէի որեւէ դրական փաստ չունինք այս նոյնացումին ի նպաստ:

Պատմութեան ժամանակը կը շարունակէ Փարպեցիին փակած տարիներէն մինչեւ 660 թուականը, եւ գիրքը կը վերջացնէ յոռետես վերջաբանով մը: Մահուան թուականին ծանօթ չենք:

Ձեռագիրներուն մէջ այս գործը կը կրէ *Պատմութիւն ի Հերակլ* տիտղոսը, բայց վստահ չենք եթէ հեղինակին կողմէ տրուած է այս, թէ՛ օրինակողներէն: Սկիզբը ունի երկու կարճ Անանուն դպրութիւններ, որոնք կը համառօտեն Խորենացիին պատմութեան մշակած նիւթը՝ Հայկէ մինչեւ Արշակունիներու հարստութեան հաստատումը Հայաստանի մէջ, բայց կ'ըսէ որ այս տեղեկութիւնները առած է Ագաթանգեղոսի մը անունով Մծբինի մէջ գրուած արձանագրութենէ մը, որ գուցէ Խորենացիին ալ աղբիւրն է: Շատ բանատերեր փորձած են ուսումնասիրել այս դպրութիւնները հասնելու համար որոշ հասկացողութեան մը անոնց հեղինակին կամ հեղինակներուն մասին, բայց մեր ձեռք հասած տուեալներուն վրայ հիմնուելով՝ կարելի է միայն ըսել որ այս գործին բնագիրը բաւական խանգարուած վիճակով հասած է մեզի եւ ամբողջական չէ:

Ձեռագիրներուն մէջ գիրքին գլխակարգութիւնը միակերպ չէ եւ յստակ բաժանում չկայ. հայոց պատմութիւն ըլլալէ աւելի՝ Հայաստանի տարածքին տեղի ունեցած դէպքերու յիշատակութիւն մըն է, եւ այդ ալ՝ ոչ ամբողջական, այլ միայն այն անցքերուն՝ որոնք կը հետաքրքրեն հեղինակին նախասիրութիւնները: Սկսելով Վահան Մամիկոնեանի մարզպանութեան օրերէն, կը շարունակէ պատմել Դուինի 571ի ապստամբութիւնը, Պարսիներու Որմիզ թագաւորին մահը եւ Խոսրով Ապրուէզի թագաւորութիւնը, Սօրիկ կայսրին հետ հաշտութեան կնքումը, Հերակլ եւ Կոստանդին կայսրներուն տարիները, եւ Արաբներու տիրապետութեան արագ ծաւալումը: Հետաքրքրական է բայց յայտնի չէ թէ ինչու բաւական ընդարձակ կերպով կը պատմէ Վահրամ Մերիեանդակ պարսիկ իշխանին շահագործութիւնները:

Սեբէոս ըմբռնած է որ այլեւս հայ ազգային կեանքը տիրող երեւոյթ ըլլալէ կը դադրի իր օրերուն, եւ հայ անձնատրութիւններ չեն յաջողիր հասարակաց զօրութիւն մը կազմել, հակառակ որ անձնական քաջագործութիւններ չեն պակսիր: Դէպքերը կը ներկայացնէ անկողմնակալ կերպով, բայց առանց թափանցելու անոնց խորքը. տեսակ մը յոռետես սպասման հոգեբանութիւնը յայտնի է: Թէի շատ անգամ կ'անտեսէ կարեւոր դէպքեր պարզապէս որովհետեւ չեն համընկնիր իր տեսութիւններուն, բայց այս գործը Եօթներորդ դարու միակ աղբիւրը կը հանդիսանայ եւ կարեւորութիւն ունի՝ ժամանակին վիճակին ու մտայնութեան ծանօթանալու համար:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի «Պատմութիւն Հայ Գրականութեան» հատորէն)

